ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 1 >> նոյեմբերի 2010թ. N 238-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 4-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում Հարություն Արշակյանի փոխարեն ընդգրկել Վազգեն Հարությունյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի հունվարի 7-ի N 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 176-Ա որոշման հավելվածում <<Հարություն Արշակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ>> բառերը փոխարինել <<Վազգեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական, հանձնաժողովի նախագահի տեղակալ>> բառերով:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝